Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թ.
դեկտեմբերի 19-ի նիստի N 52
արձանագրային որոշման

<u>Ֆինանսավորման Համաձայնագիր</u>

Ամսաթիվ՝

KfW, Ֆրանկֆուրտ Մայն
(«KfW»)

և

Հայաստանի Հանրապետության

(«Ստացող»)

միջև

ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության
սույն Ֆինանսավորման համաձայնագրի կնքման վերաբերյալ
(«ՀՀ ֆիննախ»)

և

ի դեմս ՀՀ տարածքային կառավարման նախարարության
Ջրային տնտեսության պետական կոմիտեի
Ծրագրի իրականացման մասով
(«ՋՏՊԿ» կամ «Ծրագրի իրականացման գրասենյակ»)

2,500,000 եվրո գումարի

Համայնքային Ենթակառուցվածքների Ծրագիր II - Փուլ 3-ի Ուղեկցող միջոցառումներ
(BMZ-Nr. 2013.7017.0)

2013թ.-ի սեպտեմբերի 13-ի թիվ 144/2013 բանավոր նշման հիման վրա, որը տրվել էր Երևանում Գերմանիայի Դեսպանության կողմից Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությանը, և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին 2013թ. («Կառավարության Համաձայնագիր») համաձայնագրի հիման վրա, որը դեռ պետք է ստորագրվի, Ստացողը և KfW սույնով կնքում են հետևյալ Ֆինանսավորման Համաձայնագիրը.

Հոդված 1

Ֆինանսական աջակցության գումարը և նպատակը

1.1 KfW բանկը կերկարաձգի ֆինանսական աջակցությունը Ստացողի հանդեպ՝ չգերազանցելով

2,500,000 եվրոն

Այս ֆինանսական աջակցությունը վճարման կամ հատուցման ենթակա չէ, եթե այլ բան նախատեսված չէ Հոդված 3.2-ով:

1.2 Ստացողը կօգտագործի ֆինանսական աջակցություն բացառապես փորձագիտական ծառայությունների նպատակով Համայնքային Ենթակառուցվածքների Ծրագիր II - Փուլ 3-ի Ուղեկցող միջոցառումների շրջանակում («Փորձագիտական ծառայություններ»), հատկապես ֆինանսավորելու Կառավարման Պայմանագիրը նշված ընկերությունների համար՝

- Հայջրմուղկոյուղի Փակ Բաժնետիրական Ընկերություն
- Լոռի ջրմուղկոյուղի Փակ Բաժնետիրական Ընկերություն
- Նոր Ակունք Փակ Բաժնետիրական Ընկերություն
- Շիրակ ջրմուղկոյուղի Փակ Բաժնետիրական Ընկերություն

և առաջին հերթին վճարելու արտարժույթի ծախսերը: Ստացողը և KfWբանկն առանձին համաձայնագրով կսահմանեն ֆինանսական աջակցությամբ ֆինանսավորվելիք Փորձագիտական ծառայությունների մանրամասները և ծավալը:

1.3 Ստացողը և KfW բանկը մանրամանս կերպով կսահմանեն համապատասխան (զուգահեռ) ներդրումները, որոնք կտրամադրվեն Ստացողին առանձին համաձայնագրով: Ստացողը կտրամադրի համապատասխան (զուգահեռ) ներդրումներն ամբողջությամբ և ճիշտ ժամանակին: Ստացողը, ըստ պահանջի, KfW բանկին կտրամադրի փաստարկ, որն ապացուցում է, որ ձեռնարկված միջոցառումներն այդ նպատակով են օգտագործվել:

1.4 Ստացողի կողմից առաջացող հարկերը և հանրային ծախսերը և ներմուծման գծով տուրքերը չեն ֆինանսավորվի ֆինանսական աջակցության կողմից:

Հոդված 2

Վճարում

2.1 KfW բանկը կհատկացնի ֆինանսական աջակցություն համաձայն Փորձագիտական ծառայությունների առաջընթացի և համաձայն Ստացողի պահանջի: Առանձին համաձայնագրով Ստացողը և KfW բանկը կսահմանեն վճարումների ընթացակարգը, մասնավորապես այն վկայությունը, որն ապացուցում է, որ հատկացված միջոցներն օգտագործվել են նախատեսված նպատակի համար:

2.2 KfW բանկը իրավունք ունի հրաժարվել վճարումներ կատարելուց 2016թ.-ի դեկտեմբերի 30-ից հետո:

Հոդված 3

Մասհանումների և մարման կասեցում

3.1 KfW բանկը կկասեցնի վճարումները, եթե.

ա) Ստացողը ձախողում է կատարել KfW բանկի հանդեպ իր պարտավորությունները՝ ժամանակին կատարել վճարումները,

բ) Սույն Համաձայնագրին առնչվող սույն Համաձայնագրով կամ առանձին պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են,

գ) Ստացողը չի կարող ապացուցել, որ ֆինանսական ներդրումներն օգտագործվել են նախատեսված նպատակի համար, կամ

դ) Արտակարգ հանգամանքներ են առաջացել, որոնք խանգարում կամ լուրջ վտանգի տակ են դնում Փորձագիտական ծառայությունների իրականացումը կամ նպատակը:

3.2 KfW բանկը կարող է պահանջել ֆինանսական աջակցության անհապաղ մարում, եթե Հոդված 3.1 բ) և գ) կետերում նշված որևէ իրավիճակ է տեղի ունեցել և չի վերացվել KfW բանկի կողմից սահմանված ժամկետի ընթացքում, որը, այնուամենայնիվ, կլինի առնվազն 30 օր: Հոդված 3.1 գ) կետում նշված դեպքում, մարումը կսահմանափակի այդքան գումարներով, քանի որ Ստացողը չի կարող ապացուցել, որ գումարներն օգտագործվել են նախատեսված նպատակի համար:

Հոդված 4

Ծախսեր և հանրային վճարներ

Ստացողը պատասխանատու է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից դուրս բոլոր հարկային պարտավորությունների և հանրային վճարների համար՝ որոնք կապված են սույն Համաձայնագրի կնքման և իրականացման հետ , ինչպես նաև բոլոր փոխանցման և փոխարկման ծախսերի համար, որոնք կապված են ֆինանսական միջոցների մասհանման հետ:

Հոդված 5

Պայմանագրային տեղեկանքներ և ներկայացուցչական լիազորագիր

5.1 ՀՀ Ֆինանսների նախարարը և իր կողմից KfW բանկին ներկայացված անձինք, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված ստորագրությունների նմուշներով, լիազորված կլինեն վերջինիս կողմից հանդես գալու որպես Ստացողի ներկայացուցիչ սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում: Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահը և իր կողմից KfW բանկին ներկայացված անձինք, Կոմիտեի նախագահի կողմից հաստատված ստորագրությունների նմուշներով, լիազորված կլինեն վերջինիս կողմից հանդես գալու որպես Ստացողի ներկայացուցիչ առանձին Համաձայնագրի իրականացման ընթացքում, ինչպես նաև ծրագրի Փորձագիտական Ծառայությունների իրականացման ժամանակ:

Ներկայացուցչական լիազորագիրը ուժի մեջ կլինի մինչև KfW բանկը ստանա համապատասխան ժամանակահատվածում Ստացողի լիազորված ներկայացուցչի կողմից ուղարկված վաղաժամկետ բացարկը:

5.2 Սույն Համաձայնագրի շրջանակներում փոփոխություններն ու լրացումները և պայմանագրի կողմերից ներկայացված ցանկացած տեղեկություններն ու տեղեկանքները պետք է տրամադրվեն գրավոր: Ցանկացած տեղեկություն կամ տեղեկանք կհամարվի ստացված հասնելով պայմանագրի համապատասխան կողմի հետևյալ հասցեյով, կամ պայմանագրի կողմի ցանկացած այլ հասցեյով, որի մասին կտեղեկացվի պայմանագրի մյուս կողմը.

KfW բանկի համար.
KfW
Postfach 11 11 41
60046 Frankfurt am Main
Federal Republic of Germany
Fax: +49 69 7431-2944

Ստացողի համար.
ՀՀ Ֆինանսների նախարարություն
@Հասցե Մելիք-Ադամյան 1
@Ֆաքս 060 700 358
Ջրային տնտեսության պետական կոմիտե

@Հասցե
@Ֆաքս

Հոդված 6

Փորձագիտական Ծառայություններ

6.1 Ստացողը պետք է

a) պատրաստի և իրականացնի փորձագիտական ծառայությունները համապատասխան հիմնավոր ֆինանսական և ճարտարագիտական պրակտիկայի, և, մասնավորապես, համապատասխան կոնցեպցիաների, որոնց շուրջ համաձայնություն է ձերք բերվել Ստացողի և KfW բանկի միջև, և այս նպատակով ներգրավի անկախ, որակավորված խորհրդատու ճարտարագետների ծառայությունները:

b) ապահովել փորձագիտական ծառայությունների ամբողջական ֆինանսավորումը և ըստ պահանջի KfW բանկին ներկայացնել հիմնավորումներ առ այն, որ բոլոր այն ծախսերը, որոնք չեն ծածկվի սույն ֆոնդից, այնուամենայնիվ չվճարվեն:

c) պահպանել կամ նպաստել այն գրառումների պահպանմանը, որոնք հստակորեն ներկայացնում են փորձագիտական ծառայությունների հետ կապված բոլոր ծախսերը և պարզ բացահայտում են այն ծառայությունները, որոնք ֆինանսավորվել են սույն ֆինանսական ներդրումներից:

d) հնարավորություն ստեղծի KfW բանկի ներկայացուցիչների համար ցանկացած ժամանակ վերստուգելու վերոհիշյալ գրքերը, գրառումները և ցանկացած այլ փաստաթղթերը՝ կապված փորձագիտական ծառայությունների իրականացման հետ:

e) տրամադրել KfW բանկին ցանկացած և ողջ տեղեկատվությունը և հաշվետվությունները փորձագիտական ծառայությունների և դրանց հետագա զարգացումների վերաբերյալ՝ ըստ KfW բանկի պահանջի:.

f) իր իսկ կամքով անմիջապես տեղեկացնի KfW բանկին ցանկացած և բոլոր հանգամանքների մասին, որոնք կխոչընդոտեն կամ իրական վտանգի կենթարկեն փորձագիտական ծառայությունների իրականացումը կամ ծառայությունների նպատակը:

6.2 Ստացողը և KfW բանկն առանձին Համաձայնագրով պետք է սահմանեն 6.1 Հոդվածում ակնարկված ծառայությունների շրջանակը:

Հոդված 7

Այլ դրույթներ

7.1 Ստացողը պետք է ապահովի, որպեսզի անձինք, ում սույն Համաձայնագրով հանձնարարված է նախապատրաստել և իրականացնել փորձագիտական ծառայությունները, ֆինանսավորվող փորձագիտական ծառայությունների ցանկացած պայմանագրի շնորհումը և ֆինանսական միջոցների մասհանման ներկայացումը, չպահանջեն, չենթադրեն, չփոխհատուցեն, չնվիրեն, չխոստանան կամ ձեռք չբերեն անօրինական վճարումների կամ այլ առավելությունների խոստում՝ կապված այս աշխատանքների հետ:

7.2 Եթե Համաձայնագրի որևէ դրույթ անվավեր է ճանաչվում, մնացած բոլոր դրույթները պետք է մնան անփոփոխ: Այդ կապակցությամբ ստեղծված բացթողումը պետք է լրացվի սույն Համաձայնագրին համապատասխան դրույթով:

7.3 Ստացողը չի կարող նշանակել կամ փոխանցել, կամ գրավադնել սույն Համաձայնագրի որևէ դրույթ:

7.4 Այս Համաձայնագիրը կարգավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքով: Իրականացման վայրն է Ֆրանկֆուրտ Մայնը, Գերմանիա:

7.5 KfW բանկի և Ստացողի միջև սույն Համաձայնագրով ստեղծված իրավական կապերը կդադարեն վերջին մասհանումից վեց տարի հետո:

7.6 Սույն Ֆինանսական Համաձայնագիրը կմտնի ուժի մեջ Միջկառավարական Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, որի վրա էլ այն հիմնված է:

Պատրաստված է երեք (3) բնօրինակից անգլերեն լեզվով:

Ֆրանկֆուրտ Մայն, Գերմանիա

Ամիս, ամսաթիվ, 2013

KfW բանկ

Երևան,

Ամիս, ամսաթիվ, 2013

Հայաստանի Հանրապետություն, ներկայացված Ֆինանսների Նախարարության կողմից

Հայաստանի Հանրապետություն, ներկայացված ՀՀ տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից